

ախորժակը տարածեց, հասարակաց առաքինութեանց համար ընդունակութիւն չգտնուելով։

Արատիոս քու տկարութեանդ հազորդակից կ'ըլլայ, ու կ'ըսէ քեզի։ Տես, Եպիկուրոսի հօտէն խոզ մընեմ, : Իսյց մի վստահիր աս խօսքին։ Երբոր կարծես թէ ըստ ամենայնի կողմակից է քեզի, կունակը կը դարձնէ քեզի ու կը ծաղըէ։ Եսյն իսկ իւր բարեկամները կը պախարակէ՝ քաղցր կերպով մը, ձեռուընին սիսմելով, և կը համբուրէ այն վէրքերն՝ որ ինքը կուտայ։ Եւ գարձեալ, փոխանակ հայեցական կենաց վրայ այն ընդհանուր առածները գրելու, որովք Յոթնալ լիէ, և որոնք տեսակ մը նուսխայ են որ նոյն ազգեցութիւնը կ'ընեն ապականեալ մարդկան սրտին վրայ՝ ինչ որ վըշտացելոց վրայ միսիթարութիւնը, անանկ որ թէ իրենց վշտացն և թէ միսիթարութիւններուն պէտք է համերեն։ Փոխանակ ընդհանուր բարոյականի վճիռներուն, որ կը ցուցընեն թէ ինչ պէտք է ընել՝ քան թէ ինչ կրնայ ըլլուիլ, շտեմարան մը՝ որուն կը դիմեն բոլոր հաետորներուն ցեղը, Արատիոս մեզի կը հաղորդէ այնպիսի փորձառական ձշմարտութիւններ, մանրամասն պատուէրներ, ներքին մանր առաքինութիւններ, որ գրոց մէջ չեն գտնուիր, բայց մարդկանց հետ կենցաղավարելով կը սորվուին, փորձով ու ալեզարդ մօրուօք։ Իր ծաղրաբանութիւնն է անոյշ, զուարձալի և թափանցող։ Արիշի դիմաց չերենար թէ իրմէ հարուած ընդունած ըլլաս։ Բայց տունդ որ մտնաս, իր նետերը պատմուձանիդ տակը կը գտնաս։ Արատիոսի երգիծաբանութիւնը շռայլութեան ու խաղաղութեան ժամանակի մը մէջ երեցաւ, յորում բնաւորութիւնները քիչ մը տկար էին, և յորում նոյն իսկ մոլութիւնը բարեկարգութե ու վայել չութեան գունով մը ծածկուած էր։ անոր համար նուազ այլանդակ, և հետեաբար աւելի սովորական ախտից հետ կուուեցաւ։ Ենայս պատճառաւ

է որ գեռ ևս իր երգիծաբանութիւնը ժողովրդեան աղէկ կը յարմարի։

### ՆԻԶԱՐ

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սամոյետ ժողովուրդը։

Սամոյետ ըսուած ժողովուրդը Ախպերիոյ մէջ կը բնակի, և իրեն լեզուովը՝ Ախնեց կը կոչուի։ Փաքրահասակ են ասոնք, և մարմնեղ. գլուխնին մեծ, գէմքով տափակ, բերաննին ու ականջնին խոշոր, շրթունքնին թանձր ու գուրա ինկած են։ սե աշուըներ ու սե մազ ունին։ Արապաշտ են կրօնիւը, և դատիսներ այսինքն կախարդներ ունին, որ ձեռքի խաղերու մէջ շատ ձարտար են, և երբեմն մոլեգնութիւն ալ ձեացընելով կը խաթեն ժողովուրդը։

Սամոյետ մը երբոր կ'ուզէ կարգուիլ, պէտք է որ այնպիսի տունէ մը աղջիկ առնէ, որ իրեն հաւասար ըլլայ աստիշանաւ և հարստութեամբ։ ուստի ասքանիս համար միջնորդ մը կը փնաըռէ, ու անոր և իր ազգականներուն հետմէկտեղ իր ապագայ հարսին հօրը վրանը կ'երթայ։ Արբոր հոն կը համնին, միջնորդը միայն ներս կը մանայ խօսելու յարմարցընելու համար։ շատ գժուարին կը հանդիպի որ հայրը մերժէ անոր իննդիքը, որովհետեւ բերուած ընձաները, որոնց կէսը իրեն կ'իյնայ, բնականաբար ազքը կը շլացընեն։ Ապագայ էրիկն ընձաներն որ կը ներկայացընէ, որոնք հագուստներ, կաչկարասիք, խոչանոցի անօթներ, ուն եղջերուի մորթեր և այն կ'ըլլան։ հարսին հայրը կերակուրի կը հրամցընէ զանիկայ, և կերակուրյն միջոցը երկուքն ալ կ'երգեն, առջինը իր աներոջն մարդասիրութիւնը գովելով, երկուրդն ալ յանձնելով իր փեսին որ սիրէ ու աղէկ նայի իր աղջիկը։ Եսյն ատեն ամուսնութեան օրը կ'որոշեն, և հարսին հայրը պարտաւորուած է նոյն օրը կար-



### Այր Սամոյետ

գուղներուն ընծայ մը ընելու , որ ըզ-  
գեստեղէն պիտոր ըլլայ :

Այսմանսեալ գերեզմանատեղի չու-  
նին Այսոյետները , հապա ո և իցէ  
բլրոյ մը վրայ կը թաղեն : Որչափ ըզ-  
գեստ կրնան նէ կը հազցընեն մեռելոյն ,  
և մնացածներն ալ քովը կը դնեն . յե-  
տոյ սան մը կ'անցընեն գլուխը , որով-  
չետեւ ըստ իրենց մոլար կարծեացը

հոգին՝ մարմնոյն ոչնչանալէն վերջը՝ ա-  
նոր մէջ կը բնակի : Եւ այս ամէն բա-  
ներով մէկտեղ դիակը ռէնի կաշւով  
ծածկութի մը մէջ կ'առնեն , և վրանին  
կամ խրձիթին մէկ կողմէն մասնաւոր  
լոյն ծակ մը բանալով , անկէց դուրս  
կը հանեն , վասն զի այս աւելորդապաշտ  
մարդիկը մտքերնին դրած են՝ որ եթէ  
դռնէն տարուի մեռեալը , անսմիջապէս

մահուան հարուածն ընտանեաց մէ-  
կուն վրայ կ'իջնայ : Այս որ ամառ ա-  
տեն հանդիպի , պղտի փոսի մը մէջ կը  
թաղեն , և վրան ծառի ճիւղեր կը  
տնկեն : Այս որ ձմեռ ատեն է , խրձի-  
թի մը մէջ կը դնեն դիակը , և գերեզ-  
մանին վրայ կացին մը , դանակ մը , ա-  
զեղ մը , նետեր , ծիսախոտ , ծխափայտ  
մը , դգալ մը և գաւաթ մը կը ձգեն :

Խրբոր Աամյետ մը իր ազգականին  
գերեզմանին քովլէն կ'անցնի , պարտա-  
կան է աչն մը մորթելու և ուտելու  
քովն եղած ընկերներուն հետ՝ ի իշա-  
տակ մեռելոյն : Յետոյ ցիցի մը վրայ  
կ'անցընեն կենդանւոյն գլուխն ու գե-  
րեզմանին քովլ կը տնկեն : Այրիներն  
ի նշան սգոյ ցան և ցիր կը ձգեն իրենց  
մազերը . և երբոր սգոյ ժամանակը լը-  
մըննայ , նորէն երկու կը հիւսեն և եր-  
բորդ հիւս մըն ալ կ'աւելցընեն որ մէկ  
ականջին վրայ կ'իջնայ . այսպէս կը շա-  
րունակեն մինչև ՚ի մահ :

Հագուստի կողմանէ ( )սգեաքներու  
կը նմանին , բայց Աամյետները գլուխ-  
նին չեն քերծեր ամենեին և մօրուքնին  
ալ կը ձգեն : Աանանց զգեստը քանի մը  
տարբերութիւններ ունի . ( )սգեաք-  
ներու պէս քող չեն գործածեր . իրենց  
գլուխն ու երեսը բաց կը պահէն , ՚ի  
բաց առեալ Ճանապարհորդութեան մի-  
ջոցը . մազերնին ալ չեն կապեր . իսկ  
ականջներնուն բուստէ գինդեր կը դը-  
նեն : ՊատմուՃաննին սովորաբար դե-  
ղին աչն մորթով շինուած է , որուն  
վրայ կերպասի կտօրներ յարմարցուցած  
են , եզերը չուխայէ ժապասինաւ պա-  
տած է , և ստորին կողմը գեղեցիկ մուշ-  
տակաւ մը . ասոր առջեւի կողմը բաց  
ըլլալով , գոտուով մը կը պնդեն զան :  
Բնդհանուր խօսելով , աղտեղի է այս  
ժողովուրդը ( )սգեաքներուն պէս :

Կ ատ մեծ յարդ չեն տար Աամյետք  
կանանց . անոր համար այս յետինները  
ոչ երեկ իրենց երկանցն հետ կերա-  
կուր կ'ուտեն . և տնական աշխատու-  
թիւններէ քիչ մը շունչ աւնելու հա-  
մար չեն կրնար խրձիթին քովլերը շրջան  
մը ընել , որովհետեւ իրենց տգետ էրիկ-

ները մաքերնին զրած են որ երկրորդ  
գիշերը գայլերը կու գան ու իրենց ռէ-  
նէրը կ'ուտեն :

Աամյետներու լեզուն խիստ է , կո-  
կորդային , և ամենեւին մէկ լեզուի մը  
չնմանիր . հանդերձ այսու՝ հանդէս-  
րու ու պարու միջոց անպակաս են զա-  
նազան երգեր :

## ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

### ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Անեղարար պարարտ գոյացուրիւնք կենդա-  
նեաց :

Լարսէ : — Այս պարարտ գոյացու-  
թիւնս , որ այլ և այլ սննդարար պա-  
տրաստութեանց մէջ քան զամէնն աւե-  
լի գործածականներէն մէկն է , կրնայ  
դիւրաւ հանուիլ սերէն կամ կաթէն  
սաստիկ բախմամք երկար կամ կարծ  
ժամանակ մը . ու մեծամեծ կալուած-  
ներու մէջ Պազզիա և ընդհանրապէս  
Կնդղիս ու Ակովտիա այս բախումնս  
ձիով կամ շոգեշարժ մեքենաներով կը  
կատարուի :

Լարազը քանի որ թարմ է , հաղորդ  
է կաթին կամ սերին որպիսութեանցն  
ուսկից առաջ կու գայ : Այս բանս դիւ-  
րին է ըմբռնել , վասն զի կը պահէ մաս  
մը այն հոտաւէտ նիւթէն , որ գլխաւո-  
րապէս կաթընտու կենդանւոյն կերած  
թարմ կամ չոր խոտէն կը գոյանայ :  
Այս թեթև հոտաւէտութիւնս , որով  
կը զանազանի գեղեցիկ մարգագետին-  
ներու վրայ կթուած կաթը , կարագին  
մէջ ալ կը մնայ , ուր շատ անգամ կը  
գտուին նաև մաս մը շիշուկ , քիչ մը  
պանրանիւթ և թթու : Պիտուած է  
որ շատ կը տարբերի կարագին համն  
ըստ արօտից , ըստ տեղեաց , ըստ եղա-  
նակաց և ըստ այլ և այլ կենդանեաց :  
Կամնի մը երկիր կարազը փափուկ կ'ըլ-  
լայ , սերաւոր , ախորժահոտ . ուր ընդ-  
հակառակն այս երկիրներուն մօտ տե-